355(062)
Ա-11

ՀՄ ՊԱՋԱՎԻԱՔԻՄԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ.

ԽՍՀՄ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԱՎԻԱՔԻՄ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ

# ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՋԻՋ

(Կանոնադրություն բջիջի և բջիջային վերստուգիչ հանձնաժողովի)

ՀԱՅ. ՊԱՋԱՎԻԱՔԻՄԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ 1929 Թ.

353(062)
01 MAR 2010
խ-11


*Պաջավիաքիմը ԽՍՀՄ խաղաղ աշխատանքի ու պաշտպանության հենարանն է*

**ԽՍՀՄ ՊԱՋԱՎԻԱՔԻՄԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ**

ԽՍՀՄ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԱՎԻԱՔԻՄ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ

# ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՋԻՋ

(Կանոնադրություն բջիջի և բջիջային վերստուգիչ հանձնաժողովի)

ՀԱՍՏԱՏՎԱԾ Ե ԽՍՀՄ ՊԱՋԱՎԻԱՔԻՄԻ ՅԵՎ ՌՍՖԽՀ ՊԱՋԱՎԻԱՔԻՄ ՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ 2-ՐԴ ՊԼԵՆՈՒՄԻ ԿՈՂՄԻՑ

12410-57
Ա. Մյասնիկյանի անվան Публичная Библиотека


ՀԱՅ-ՊԱՋԱՎԻԱՔԻՄԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ 1929 Թ.

26 FEB 2014
40.731

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ I ՏՊԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ № 800
ԳՐԱՌԵՊԳԼԽՎԱՐ 1479 Բ.
ՏԻՐԱԺ 3000

# ՆԱԽԱԲԱՆ

*Սույն կանոնադրությունը զգալիորեն տարբերվում է սրանից առաջ կիրառվող կանոնադրությունից։*

*Հիմնական տարբերությունները մի կողմից՝ այն են, որ ճշտված են բջիջների աշխատանքի խնդիրները, ձևերն ու մեթոդները և մյուս կողմից՝ լրացված են նոր մոմենտներով, որ առաջ է քաշել ինքը կյանքը ընկերության վերջին տարվա աշխատանքի ընթացքում։*

*Նոր կանոնադրության մեջ մտցրված են ցուցումներ ոչ միայն քաղաքային, այլ և գյուղական բջիջի համար։*

*Ընդգծված է հասարակական ու ֆինանսական դիսցիպլինայի առավելագույն ամրացման խնդիրը, մանավանդ, որ ուժեղացված է բջիջների նյութական բազան*

իրենց գործնական աշխատանքի համար: Համաձայն Կենտրոնական Խորհրդի II պլենումի վորոշման, անդամավճարների՝ բջիջներում մնացող տոկոսը հոկտեմբերի 1-ից ավելանալու յե մինչև 50 տոկոս:

Սույն կանոնագրքում մտել են ցուցումներ ընկերության այնպիսի կարևորագույն խնդիրների մասին, ինչպիսին են՝ աջակցություն սոցիալիստական շինարարության, կռիվը կուլտուրական հեղափոխության համար, հողոգտագործման կոլլեկտիվ ձևերի զարգացման համար և այլն:

Բջիջի կանոնադրության հետ միաժամանակ հրատարակվում է ստորին բըջիջային վերստուգիչ հանձնաժողովի կանոնադրությունը, վոր մշակված է ու հաստատված Կենտր. Վերստ. Հանձնաժողովի կողմից (Արձանագրություն № 29. 28 փետրվարի—28 թ.): Այդ կանոնադրությունը կհեշտացնի վերստուգիչ հանձնաժողովի աշխատանքը և, անկասկած, կնպաստի ստորին Պոջավիաքիմիական կազմակերպությունների ամբողջ գործունեության ստուգման ու վերահսկողական վորակի բարելավմանը:



Սույն կանոնագրքի լույս տեսնելով, վերացվում է սրանից առաջ գործող կանոնադրությունը, վոր հրատարակված եր 1927 թվին:

ԽՍՀՄ Պոչավիաքիմի Միության Կենտրոնական խորհուրդ

---

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ԽՍՀՄ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ, ՅԵՎ ԱՎԻԱ-ՔԻՄԻԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲՋԻՋԻ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Համաձայն կանոնադրքի՝ Պաշավիաքիմի Ընկերությունն իրեն խնդիր է առաջադրում՝ կազմակերպել ԽՍՀՄ պաշտպանության ամրացման և ավիացիոն ու քիմիական արդյունաբերության հասարակական կամավոր աջակցությունը:*

*1. Ընկերության հիմնական նախնական կազմակերպությունը հանդիսանում է Պաշավիաքիմի բջիջը, որ կազմակերպվում է ձեռնարկություններում, հիմնարկություններում, բնակարանային ընկերություննեում, գյուղում, զորամասերում և կրթական հիմնարկներում:*

*2. Բջիջի հիմնական խնդիրներն են հանդիսանում:*



*ա) աշխատավորների կամավոր (անհատական) ներգրավումն Ընկերության շարքերի մեջ.*

*բ) Նրանց՝ Ընկերության խնդիրների իրագործման վերաբերյալ ակտիվ աշխատանքի մեջ քաշելը Պաշավիաքիմի անկյունների, գիտական-հետազոտական, ռազմական գիտելիքների, հրաձգային, ավիաքիմիական խմբակների, ավիաքիմ ջոկատների, օդային սպորտի խմբակների, փորձնական-ցուցադրական տեղամասերի և այլի միջոցով.*

*գ) ռազմական, ավիացիոն և քիմիական գիտելիքների տարածումն ու պաշտպանության, ավիացիայի, օդագնացության և քիմիայի խնդիրների՝ մասսայականացումն աշխատավորների միջև.*

*դ) միջոցներ հավաքելը՝ բջիջի անդամների և աշխատավորների մասսաների մեջ ուժեղացնելու և զարգացնելու համար Ընկերության աշխատանքը և ամրացնելու համար ԽՍՀՄ պաշտպանությունը, համաձայն Ընկերության խնդիրների:*

## II. ԲՋԻՋԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

*3. Ընկերության բջիջները կազմա-*

կերպվում են համաձայն § 1-ի, յերբ կա Ընկերության առնվազն յերեք անդամ:

4. ԲՋԻՋԸ կարող է կազմակերպվել յուրաքանչյուր աշխատավորի նախաձեռնությամբ, համաձայնեցնելով այդ կուսակցական-կոմյերիտական կազմակերպությունների, գործարանային տեղկոմների, զորամասի հրամանատարության, գյուղխորհրդի և այլի հետ, Ընկերության համապատասխան գավառամասային, շըրջանային, գավառական և այլ բաժանմունքի հաստատությամբ:

Դրա համար անհրաժեշտ է.

ա) հարցաքննության միջոցով պարզել Պաջավխաքիմի անդամների և Պաջավխաքիմի շարքերը մտնել ցանկացողների քանակը բանվորների, գյուղացիների, ծառայողների, կարմիր բանակայինների մեջ՝ ձեռնարկություններում, գյուղում, հիմնարկում, զորամասում և այլն.

բ) կազմակերպչական ժողով գումարել, վորտեղ պարզել Պաջավխաքիմի անդամների անդամատոմսեր ունենալը, վորոնց միջոցով հաստատվի, թե անդամները յեղել են Ընկերության շարքերում կամ դրանից առաջ Ավխաքիմի կամ



Պաջը-ի շարքերում, թե ինչ ժամանակ և վորտեղ են վճարված անդամավճարները, և ապա ընտրել ժամանակավոր կազմակերպչական բյուրո, վորն անմիջորեն ղեկավարում է նախագահը: Յեթե անդամների քանակը 10 հոգուց ավելի չէ, այն ժամանակ բյուրոյի փոխարեն ընտրվում է միայն բջիջի քարտուղար և գանձապահ:

գ) Կազմել Պաջավխաքիմի անդամների ցուցակը, նշելով անդամատոմսերի համարները, անդամավճարների մուծման ժամանակը, ինչպես նաև յուրաքանչյուր անդամի սոցիալական դրությունը, կուսակցական պատկանելությունը և աշխատանքի վայրը:

դ) Անդամների ցուցակագրության և բջիջը հաստատելու համար բջիջի կազմի մասին թվական տեղեկություններ ներկայացնել Ընկերության տեղական ղեկավար մարմնին (Պաջավխաքիմի գավառակային, քաղաքային և այլ խորհուրդներ):

Ծանոթություն 1. Յերբ ձեռնարկությունում, հիմնարկում կամ գյուղում և այլն չկա Պաջավխաքիմի յերեք անդամ, այնտեղ յեղած մեկ կամ յերկու անդամներն անհատապես նոր

անդամներ են ներգրավում և ապա արդեն հրավիրում կազմակերպչական ժողով:

Ծանոթություն 2. Երբ ձեռնարկությունում, հիմնարկում կամ գյուղում և այլն Պաշավիաքիմի անդամներ չկան, բջիջը կարող է կազմակերպվել մեկ-երկու բանվորի, ծառայողի, կարմիր բանակայինի, աշխատավոր գյուղացու և այլոց նախաձեռնությամբ, որոնք միաժամանակ ձեռնարկելով ընկերության մեջ իրենց անդամագրվելը (հա, եռն բջիջներում կամ գավառական, քաղաքային ընկերությունում) աշխատանք են կատարում № 1 ծանոթության համեմատ:

Ծանոթություն 3. Նոր կազմակերպված բջիջը վերադաս ընկերության կողմից հաստատվելու հետ միաժամանակ հաստատվում է նաև 6 ամիս ժամկետով ժամանակավոր բյուրոն կամ բջիջի քարտուղարը:

## III. ԲՋԻՋԸ ՂԵԿԱՎԱՐՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

5. Բջիջի վերադաս ղեկավարող մարմինը հանդիսանում է նրա անդամների ընդհանուր ժողովը:

6. Բջիջի ընդհանուր ժողովի իրավասությանը յենթակա յեն.—



ա) Բջիջի բյուրոյի ու վերստուգիչ հանձնաժողովի ընտրությունը.

բ) բյուրոյի և վերստուգիչ հանձնաժողովի՝ իրենց կատարած աշխատանքի մասին տված հաշվետվությունների քննարկումն ու հաստատումը.

գ) բջիջի և նրա առանձին կազմակերպությունների (խմբակների, անկյունների և այլն) աշխատանքի ծրագրերի, ինչպես նաև ֆինանսական մտադրությունների ու նախահաշիվների քննարկումն ու հաստատումը:

դ) Լիազորների զեկուցում—հաշվետվությունների ունկնդրումն իրենց կատարած աշխատանքի և բջիջի աշխատանքային ծրագրի համապատասխան մասի կատարման վերաբերյալ:

ե) Բջիջի անդամների շարքերում հասարակական կարգապահություն հաստատելու վերաբերյալ միջոցառումների մշակումը:

զ) Անդամների ընդունելության և հեռացման հաստատումը:

է) Պաշավիաքիմի աշխատանքի ընդհանուր հարցերի, նրա վերադաս մարմինների զեկուցումների և ԽՍՀՄ պաշտպա-

նության ամրապնդման ու ավիաքիմիական շինարարության այն հարցերի ունկնդրումն ու քննարկումը, որ նպատակ ունեն իրազեկ դարձնելու այդ աշխատանքներին բջիջի բոլոր անդամներին։

7. Բջիջի ընդհանուր ժողովները հրավիրում են ոչ պակաս, քան 3 ամիսը մեկ անգամ։

Ծանոթություն 1. Բջիջի անդամների ընդհանուր ժողովն օրինական է համարվում, յեթե ներկա յեն բջիջի բոլոր անդամների առնվազն 1/3 մասը։

Ծանոթություն 2. Բացի ընդհանուր ժողովներից, բջիջը, նայած տեղական պայմաններին, հրավիրում է պատգամավորական ժողովներ։

8. Բջիջի բյուրոն հանդիսանում է բջիջի ղեկավար մարմինը ընդհանուր ժողովների միջև յեղած ժամանակաշրջանում։ Բյուրոն ընտրվում է բջիջի ընդհանուր ժողովի կողմից 3 հոգի բյուրոյի անդամների կազմով, յերբ բջիջում կա Ընկերության 10 անդամ, 5 հոգի բյուրոյի անդամների կազմով, յերբ բջիջում կա Ընկերության 25 անդամ, 7 հոգի բյուրոյի անդամների կազմով, յերբ բջիջում կա



25-ից մինչև 100 անդամ և ավելի մեծ կազմով, հաշվի առնելով տեղական պայմանները, յերբ բջիջում կա Ընկերության 100 անդամից ավելի։

Բյուրոն ընտրվում է 6 ամիս ժամանակով։

Ծանոթություն. Բյուրոյի կազմի մեջ (5—7 և այլ հոգով) ընտրվում է նաև բջիջի գանձապահը։

9. Բջիջի բյուրոյի իրավասության յենթակա յեն.

ա) Պաշավիաքիմի խմբակներ, ռազմական անկյուններ կազմակերպելը, զանազան կամպանիաներ, մասսայական և այլ աշխատանքներ կիրառելը։

բ) Բջիջի ու նրա գործնական կազմակերպությունների (անկյուններ, խմբակներ) աշխատանքը ղեկավարելն ու համախմբելը։

գ) Բջիջի ընդհանուր ժողովների որոշումները կիրառելը։

յե) Այդ հրահանգների և բջիջի ընդհանուր ժողովների որոշումների հիման վրա՝ մինչև յերեք ամիս ժամանակով աշխատանքների ծրագիր մշակելը։

Ծանոթություն. Առանձնապես խոշոր, ինչ-

պես նաև գյուղական բջիջների համար (նայած տեղական պայմաններին—դաշտային աշխատանքներ և այլն)—թույլատրվում է ծրագիրը մշակել ավելի կամ պակաս ժամանակով, համաձայնեցնելով այդ Ընկերության վերարադաս խորհրդի հետ:

գ) Բջիջի մեջ նոր անդամներ գրավելը:

ե) Ընկերության անդամների ընդունելությունը՝ բջիջի ընդհանուր ժողովի հետագա հաստատումով:

ը) Բջիջների անդամների հաշվառումը, աշխատանքի բաշխումը նրանց մեջ և նրանց աշխատանքի ղեկավարությունը:

թ) Լիազոր ջոկեր բջիջի գործնական աշխատանքը տանելու համար (համաձայնեցնելով այդ Ընկերության վերադաս խորհրդի հետ):

ժ) Պաշավիաքիմի բջիջի աշխատանքի համաձայնեցումը ձեռնարկության, հիմնարկի, գյուղի և այլ կուսակցական—կոմյերիտական խորհրդային և այլ հասարակական կազմակերպությունների աշխատանքի հետ:

ժա) Բջիջի անդամներին «ակտիվ անդամ»-ի կոչման պարգևատրման ներկայացնելը՝ նրանց ակտիվ աշխատանքի համար (համաձայն «Ընկերության ակտիվ անդամների վերաբերյալ կանոնադրություն»):



ժբ) Անդամատոմսեր տալը և մուտքի, անդամավճարների, նվիրատվությունների և այլ դրամական ու նյութական եկամուտների գանձումը:

ժգ) Համապատասխան գրականության, վիճակախաղերի տոմսերի, Պաշավիաքիմի պատրաստած նյութերի և իրերի տարածումն աշխատավոր բնակչության մեջ:

ժդ) Բջիջի միջոցների ծախսելն ու ֆինանսական մտադրությունների ու նախահաշիվների կազմելը:

ժե) Բջիջի գանձարկղի ու գույքի կառավարելը:

ժզ) Այն բոլոր հարցերի մշակելը, որ ենթակա են բջիջի ընդհանուր ժողովի քննարկման:

10. Բջիջի բյուրոյի նիստը տեղի է ունենում առնվազն ամիսը երկու անգամ:

11. Բյուրոյի նիստը կայացած է համարվում, երբ ներկա են անդամների ու թեկնածուների ամբողջ կազմի առնվազն կեսը:

12. Բյուրոն իր աշխատանքում ղեկավարվում է Պաջավիաքիմի կանոնադրքով, բջիջի ընդհանուր ժողովների համապատասխան վորոշումներով և Ընկերության ղեկավար ու վերստուգիչ վերադաս մարմինների ցուցումներով:

13. Բջիջի բյուրոն հաշիվ է տալիս ընդհանուր ժողովին առնվազն վեց ամիսը մեկ անգամ. իր հաշվետվությունների պատճենները նա ներկայացնում է վերադաս կազմակերպություններին,—գավառակային, շրջանային և այլ բաժանմունքների նախագահություններին:

14. Խոշոր, ինչպես նաև գյուղական բջիջներում, բյուրոյին ոգնելու համար՝ վերջինիս հայեցողությամբ մտցվում է լիագորների ինստիտուտ՝ ըստ բջիջի առանձին մասերի համաձայն յերկրային, արտադրական կամ վարչական նշանների· այն է՝ գործարաններում—ըստ համքյարների, բարձրագույն կրթական հիմնարկներում—ըստ կուրսերի (դասընթացների), ֆակուլտետների, բաժանմունքների, դըպրոցներում—ըստ դասարանների, հիմնարկներում—ըստ վարչությունների, զորամասերում—ըստ զումարտակների,



119

գյուղերում, կոլտնտեսություններում, ագարակներում, թույլ բջիջներում և այլն: Լիագորներին ջոկում է բյուրոն բըջիջի ակտիվ անդամներից, հաստատում է բջիջի անդամների ընդհանուր ժողովը:

15. Լիագորները կատարում են հետևյալ աշխատանքը.

ա) Պաջավիաքիմի անդամների հաշվառումը:

բ) Անդամավճարների գանձումն ու նրանց բջիջի գանձարկղին հանձնելը:

գ) Նոր անդամների ներգրավումը:

դ) Ընկերության անդամներին ակտիվ, գործնական աշխատանքի մեջ քաշելը (խմբակներ և այլն):

ե) Բջիջի աշխատանքի ծրագրի կիրառումը:

զ) Բջիջի բյուրոյի առանձին պատվերների կատարումը և այլն:

16. Բյուրոն, հարկ յեղած դեպքերում, հրավիրում է լիագորների խորհըրդակցություններ, քննարկելով այդ խորհրդակցություններում աշխատանքի հերթական հարցերը, բջիջի դրությունը և նշված միջոցառումները, լսում է հաշվե-



12410-5
Публичная Библиотека

տու զեկուցում լիազորի կատարած աշխատանքի մասին և այլն։

## IV. ԲՋԻՋԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

17․ *Ընկերության բջիջի իսկական անդամ կարող են լինել ԽՍՀՄ այն բոլոր քաղաքացիները, վորոնք հասել են 14 տարեկան հասակին, վայելում են իրավունքներ համաձայն Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության սահմանադրության։*

18․ *Մուտքի վճար բոլոր քաղաքացիների, բացի բատրակներից, չքավոր գյուղացիներից, կարմիր բանակայիններից, աշխատանքային և արհեստակցական դպրոցների ուսանողներից, հաշմանդամներից և տան տնտեսուհիներից, սահմանվում է 20 կոպեկ։*

*Բատրակների, չքավոր գյուղացիների, կարմիր բանակայինների, աշխատանքային ու արհեստակցական դպրոցների ուսանողների, հաշմանդամների ու տան տնտեսուհիների համար մուտքի վճարը սահմանվում է 10 կոպեկ։*



19․ *Անդամավճարները սահմանվում են․ ա) կարմիր բանակայինների, աշխատանքային ու արհեստակցական դպրոցների, գործարանային դպրոցների (ֆաբզավուչի) ուսանողների, գործազուրկների, բատրակների և հաշմանդամների համար տարին 10 կոպեկ, բ) գյուղացիների և բարձրագույն կրթական հիմնարկների ուսանողների համար՝ տարին 30 կոպեկ։*

*գ) Ամսական մինչև 75 ռուբլի ռոճիկ ստացող բանվորների, ծառայողների և ԲԳԿԲ պետկազմի համար՝ տարին 60 կոպեկ, դ) ամսական 75 ռուբլուց ավելի ռոճիկ ստացող բանվորների, ծառայողների և ԲԳԿԲ պետկազմի և այն անձանց համար, վորոնք չեն մտնում «ա», «բ» և «գ» խմբակների մեջ՝ տարին 1 ռուբլի 20 կոպեկ։*

*Տան տնտեսուհիներն անդամավճարը վճարում են հետևյալ կարգով․—քաղաքում ապրողները՝ 30 կոպեկ, բացառությամբ նրանց, վորոնք գտնվում են 30 կոպեկից պակաս անդամավճար տվողների խնամքի տակ, այդպիսիները վճարում են 10 կոպեկ անդամավճար․ գյուղերում ապրող տան-տնտեսուհիները վճարում են 10 կոպեկ անդամավճար։*

Ծանոթություն 1. *Անդամավճարների գանձման ժամկետը, վորպես կանոն, սահմանվում ե կիսամյակային:*

Ծանոթություն 2. *Անդամավճարների ստացման համար անդամատոմսերում անպայման փակցվում են համապատասխան դրոշմանիշեր (մարկաներ), վոր ստացվում են վերադաս կազմակերպություններից:*

Ծանոթություն 3. *«Պատանի բարեկամները», վորպես Պաշավիաքիմի անդամների կատեգորիա, յենթակա յեն հեռացման, վորովհետև Ընկերության իսկական անդամներ ընդունվում են 14 տարեկան հասակից, իսկ այդ հասակից ավելի յերիտասարդ անձինք ակտիվ անդամ լինել չեն կարող:*

20. *Բջիջի յուրաքանչյուր անդամ, ստանձնելով մի կազմակերպության անդամի պատվավոր ու պատասխանատու կոչումը, վորն աջակցում ե ԽՍՀՄ պաշտպանությանն ու ավիաքիմիական շինարարությանը, պահպանելով հասարակական խիստ կարգապահություն բացի անդամավճարների կանոնավոր վճարումներից, պարտավոր ե.*

*ա) ակտիվ աշխատել բջիջում, անմիջական մասնակցություն ցույց տալով բր-*



*ջիջի ընդհանուր ժողովի, խմբակների և այլ գործնական կազմակերպությունների աշխատանքներին և օրինակ լինել Ընկերությունից դուրս գտնվող մասսաների համար՝ այդ գործնական աշխատանքի կիրառման մեջ:*

*բ) Բարձրացնել իր ռազմական և ավիաքիմիական գիտելիքները:*

*գ) Ագիտացիա մղել, վոր աշխատավորները մտնեն Ընկերության շարքերը և ներգրավել նրանց գործնական աշխատանքի:*

*դ) Աջակցել Ընկերությանն ու բջիջին միջոցներ գտնելու մեջ նվիրատվություններ հավաքելու և այլ միջոցառումների օգնությամբ:*

Ծանոթություն. *Նվիրատվություններ հավաքելը և այլ դրամական օպերացիաները կարող են կատարվել Պաշավիաքիմի անդամների կողմից միայն յուրաքանչյուր անդամ Ընկերության ու նրա մարմինների հատուկ հանձնարարությամբ:*

21. *Բջիջի յուրաքանչյուր անդամ վայելում ե հետևյալ իրավունքները.*

*ա) Վճռական ձայնի իրավունք ժողովներում և բջիջի կամ Ընկերության ղեկա-*

վար բոլոր պաշտոնների համար ընտրելու և ընտրվելու իրավունք, ինչպես նաև պատվիրակվելու համար Ընկերության բոլոր համագումարներին, ներառյալ Պաշավիաքիմի Համամիութենական համագումարը:

բ) Հրապարակորեն դուրս գալու Ընկերության անունից, յուրաքանչյուր անգամ համապատասխան Ընկերության ու բջիջի նախագահության հատուկ թույլտվությամբ:

գ) Մասնակցելու համապատասխան կոնկուրսներին և այլ հանրապետական ու համամիութենական մրցակցություններին, որ կազմակերպում է Ընկերությունը:

դ) Ընկերության աջակցության իրավունք, յերբ ընդունվում են ռազմական ու քաղաքական ավիացիոն, օդագնացային և քիմիական դպրոցները, ըստ որում սակայն նրանք պետք է բավարարեն այդ դպրոցներն ընդունվելու ընդհանուր պայմաններին:

յե) Արտոնյալ պայմաններով այցելելու իրավունք Ընկերության կազմակերպած գրադարանները, թանգարանները,



ցուցահանդեսները, դասախոսությունները և այլն:

զ) Դիտելու իրավունք քաղաքացիական օդանավակայանները, քիմիական լաբորատորիաները և փորձնական դաշտերը, արհեստանոցները, գործարանները և Ընկերության այլ հիմնարկները թե՛ կազմակերպված էքսկուրսիաների և թե՛ անհատական կարգով:

է) Ընկերության մեջ սահմանված համազգեստ կրելու իրավունք:

ը) Ընկերության անդամներին հատկացրած կրծքանշան կրելու իրավունք:

թ) Թևնոցի նշան կրելու իրավունք Ընկերության նահանգական ու մարզական Խորհրդի թույլտվությամբ:

ժ) Զեղչի իրավունք Ընկերության բոլոր տպագիր հրատարակությունները ձեռք բերելիս:

ժա) Ընկերության աջակցության իրավունք հետազոտական ու գյուտարարական աշխատանքներում:

Բացի դրանից, յերբ ընկերության անդամներն անցնում են պարտադիր զինվորական ծառայությունը, հաշվի յե առնրվում՝ Ընկերության կազմակերպություն–

ներում նրանց կողմից դասընթացներ ու սեմինարներ անցնելը, նրանց մասնակցությունը ռազմական գիտելիքների ու հրաձգային խմբակներում և ավիաքիմիական ջոկատներում և այլն:

22. Պաշավիաքիմի անդամներն Ընկերության կողմից հեռացված են համարվում.

ա) Յերբ դիմում են տալիս հեռանալու մասին:

բ) Յերբ սիստեմատիկաբար առանց հարգելի պատճառների չեն հաճախում բջիջի և նրա այլ գործնական կազմակերպությունների ժողովները:

գ) Յերբ անդամավճար չեն վճարում 12 ամսվա ընթացքում:

դ) Յերբ կորցնում են Ընկերության անդամ ընդունվելու համար պահանջվող իրավունակությունը:

յե) Վորևե հատուկ-արատավորող արարքներ կատարելու դեպքում:

Ծանոթություն 1. Անդամների հեռացման իրավասու յե Ընկերության բյուրոն և բջիջի ընդհանուր ժողովը, ըստ վորում հեռացված անդամներին իրավունք է վերապահվում բողոքարկելու Ընկերության համապատասխան



շրջանային, նահանգական, հանրապետական մարմիններին, գրավոր բողոք տալով այն բջիջի բյուրոյին, վորը կայացրել է հեռացման վորոշումը: Բջիջի բյուրոն անպայման բողոքն իր պատճառաբանությամբ մի շաբաթվա ընթացքում իր գավառամասային, շրջանային, գավառական կամ նրանց համապատասխան բաժանմունքի միջոցով պետք է ուղղի շրջանային կամ նահանգական Ընկերությանը, վորն իր վորոշման մասին հաղորդում է անմիջորեն և՛ հեռացման մասին վորոշում կայացրած բջիջին, և՛ գանգատավորին՝ իր բողոքում մատնանշած հասցեյով:

Ծանոթություն 2. 12 ամսվա ընթացքում անդամավճար չմուծողները կարող են իրենց իրավունքները վերականգնել Ընկերության բջիջի բյուրոյի կողմից, յեթե անցած ժամանակվա համար լիովին վճարեն անդամավճարը:

23. Պաշավիաքիմի այն անդամները, վորոնք հեռացել են Ընկերության կողմից կամավոր կերպով կամ հեռացված են, իրավունք չունեն պահանջել յետ դարձնելու Ընկերությանը վճարած իրենց մուծումները, նրանք հավասարապես կորցնում են նաև Ընկերության անդամների, համազգեստ ու Ընկերության անդամակցական նշան կրելու իրավունքը:

## V. ԲՋԻՋԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՁԵՎԵՐԸ

24. Բջիջի ամբողջ աշխատանքն ունի հետևյալ խնդիրները.

ա) Պաշավիաքիմի գաղափարների պրոպագանդը աշխատավոր բնակչության լայն խավերի մեջ։

բ) Նոր անդամների ներգրավումն ու նրանց՝ Ընկերության գործնական աշխատանքի մեջ քաշելը (զանազան խմբակներ և այլն)։

գ) Դաստիարակչական աշխատանքը Ընկերության անդամների միջև։

դ) Աշխատավորների ռազմական պատրաստությունն ու ռազմական գիտելիքների լայն պրոպագանդը։

ե) ԲԳԿԲ տեխնիկական, մանավանդ ավիացիոն ու քիմիական շինարարության աջակցությունը։

զ) Աջակցությունը յերկրային շինարարությանը։

է) Միջազգային դրության և նոր պատերազմի վտանգի հարցերի լուսաբանումը։

ը) Գործնական կազմակերպությունների աշխատանքի ծավալումը (խմբակներում, անկյուններում, փորձնական տեղամասերում և այլն)։

թ) Աջակցությունը գյուղի չքավոր ու միջակ խավերի կուլտուր-քաղաքական աճմանը։

ժ) Աջակցությունը ԽՍՀՄ սոցիալիստական շինարարությանը։

ժա) Գյուղում պրոպագանդը կոլլեկտիվ հողօգտագործման և հանքային պարարտացումների գործադրության գաղափարների համար։

ժբ) Պաշավիաքիմի գաղափարների արմատացումը կուլտուր-լուսավորական աշխատանքի բոլոր տեսակի ու ձևերի մեջ (կապն ակումբների, խրճիթ-ընթերցարանների հետ և այլն)։

25. Բջիջի գործնական կազմակերպությունները հանդիսանում են.

ա) Նախնական և նորմալ (բարձրացրած տիպի) խմբակներ։

բ) Հրաձգային խմբակներ։

գ) Ռազմական գիտելիքների համապատասխան ճյուղերի, ավիացիայի, քիմիայի ուսումնասիրության խմբակներ

(հեծելապորային, տեղագրական, ավիաքիմ ջոկատներ և այլն):

դ) Գիտական-հետազոտական բնույթի խմբակներ:

յե) Ավիացիայի ու քիմիայի խմբակներ:

զ) Օդային սպորտի խմբակներ:

է) Խրճիթ-ընթերցարաններին կից ռազմական անկյուններ.

ը) Փորձնական լաբորատորիաներ-արհեստանոցներ:

թ) Փորձնական-ցուցադրական տեղամասեր գյուղում և այլն:

26. Բջիջի մասսայական աշխատանքի ձևերը հանդիսանում են.

Զեկուցումներ ու դասախոսություններ ցուցադրական նյութի գործադրությամբ, դիապոզիտիվների ցուցադրություն, բացատրական աշխատանք ռազմական անկյունների ու ագիտ սահնակների նյութերի շուրջը, պատի լրագրերի ռազմական բաժինների աշխատանքին մասնակցելը և այլն:

Էքսկուրսիաներ դեպի փորձնական-ցուցադրական տեղամասերը, թանգարանները և ԲԳԿԲ զորամասերը, ներկայացում-



ների բեմադրություններ, համերգներ, կինոներ. բջիջի խմբակների ու գործնական կազմակերպությունների նվաճումների յերեկոներ, մասսայական զրույցներ՝ մարտավարական խնդիրների լուծումով: Հրաձգություններ, հրաձգարաններ, ռազմասպորտային յելույթներ: Կռիվ այգիների, բանջարանոցների, դաշտերի, բնակարանների վնասատուների դեմ: Հանքային պարարտացման գործադրություն: Ռազմական, ավիացիոն, քիմիական և այլ գրականության տարածում և այլն:

## VI. ԲՋԻՋԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

27. Բջիջի միջոցները կազմում են.

ա) Տարեկան անդամավճարները (բայց վոչ մուտքի վճարները, վորն ամբողջովին հանձնվում են շրջանային կամ գավառական ընկերությանը):

բ) Ընդհանուր նվիրատվությունները, հանգանակությունները, հատկացումները և այլ դրամական հասույթները, բացի հատուկ կոչման նվիրատվություններից (սավառնակների համար և այլն) ու միջոցներից, վորն ամբողջովին մուծում են հանրապետական կամ Համամիութենական Ըն-

կերությունները:

գ) Եկամուտները ներկայացումներից, դասախոսություններից և բջիջի այլ նախաձեռնած միջոցառումներից և բջիջի անդամների կամավոր ինքնահարկումը:

դ) Այն գումարները, որ ստացվում են հրատարակությունների (ամսագրեր, գրքեր) և պատրաստած իրերի (նշաններ) վաճառքից և

յե) Այլ հասույթներ:

28. Բոլոր հասույթների 50% համաձայն Կանոնադրության § 27 «ա», «բ», «ե» կետերի բջիջը պարտավոր է տեղական Ընկերության հատուկ վորոշած ժամկետներին փոխադրել վերադաս կազմակերպության գանձարկղը, բացառությամբ հատուկ կոչման նվիրատվությունների, վորոնք ամբողջովին հանձնվում են վերադաս Ընկերությանը, ըստ պատկանելվույն գործադրելու համար: § 27 «գ» կետով, ինչպես նաև «դ» կետի համաձայն յեկամտի սահմանված տոկոսով ստացվող միջոցներն ամբողջովին մնում են բջիջի տրամադրության տակ:

29. § 27 «ա», «բ» և «յե» կետերով մնացող 50%, ինչպես նաև «գ» կետով 100%-ն



ոգտագործվում են բջիջի բյուրոյի կողմից դուրս գրելով բջիջի համար համապատասխան ամսագրեր և գրականություն, բջիջի գործնական կազմակերպությունների աշխատանքի ու կազմակերպման նպատակով (ձեռնարկներ, զենք և այլն ձեռք բերելու համար):

30. Չհանդիսանալով իրավական անձ, բջիջը չունի իր կնիքը, դրամարկղը և ոգտվում է տեղկոմի, հիմնարկության կնիքով ու դրամարկղով, և իրավունք չունի դրամական պարտավորություններ տալու և պայմանագրեր կնքելու:

Գյուղական բջիջներն ոգտվում են գյուղական կամ շրջանային Բ. Գ. և Կ. Բ. Խորհրդի կնիքով:

## VII. ԲՋԻՋԻ ԼՈՒԾԱՐՔԸ

31. Բջիջը լուծարքի յե յենթարկվում. ա) Վերադաս Ընկերության վորոշումով բջիջի լիակատար պասիվության դեպքում. բ) աշխատանքի անընդունակության կամ նրա աշխատանքի՝ Ընկերության ընդհանուր գծի հետ անհամապատասխանության դեպքում:

32. Բոլոր մնացող գույքը, ինչպես

նաև դրամական միջոցները, արժեքները և այլն բյուրոյի ու վերստուգիչ հանձնաժողովի կամ Ընկերության վերադաս մարմնի նշանակած հատուկ լուծարքային հանձնաժողովի կողմից ցուցակով հանձնվում և Ընկերության տեղական բաժանմունքին:

33. Կազմալուծված բջիջի անդամները՝ Ընկերության բաժանմունքի համաձայնությամբ, ամրացվում են ուրիշ բջիջներին:

---



# ՑՈՒՑԱԿ
## ՌԱԶՄԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

| № № | Գրականության անունը | Արժեք | |
|---|---|---|---|
| 1 | ԿՈԶԼՈՎՍԿԻ.—Բողարկում մաս I. | — | 20 |
| 2 | Մ. ՌԱՖԵՍ.—Կարմիր բանակ . . . | — | 15 |
| 3 | Հուշատետր հրացանաձգի 3 ք. գծ. հրացանը խնամելու համար . | — | 20 |
| 4 | Ռ. ԴԵՅՐՆԵՐ.—Հրացանաձգի նախապատրաստությունը . . | — | 60 |
| 5 | Ժամ. հրաձգ. կան. I մ. մաքսիմի հաստոց. գնդացիրի նկարագրության . . . . . . | — | 30 |
| 6 | Ժամ. հրաձգ. կան. Լույսի ձեռքի գնդացիրի նկարագրության . | — | 50 |
| 7 | Ժամ. հրաձգ. կանոն մ. I, 3 գծ. հրացանի նկարագրությունը . . | — | 40 |
| 8 | Հետևակի մարտական կանոնագիրք մ. II . . . . . . . . . . | 2 | — |
| 9 | Հրացանների խփելու ստուգման կանոնները . . . . . . . . | — | 20 |
| 10 | Ժամ. հրաձգ. կանոնա[illegible] III մ. պրակ I . . | | |
| 11 | Ա. ԱԼԵՔՍԱՆԴՐՈՎ.—[illegible] նռնակը . . | | |

ՀՀ Ազգային գրադարան
NL0206935

3

40.731

| № № | Գրականության անունը | Արժ | |
|---|---|---|---|
| 12 | Վ. ԼԵՈՆՏԻՅԵՎ. — Մարտիկի անհատական պատրաստություն | — | 30 |
| 13 | Կարմիր-մարտիկի ընթերցումը | — | 75 |
| 14 | Հրաձգային կանոնագիրք II մ. . . | 1 | — |
| 15 | Կարմիր բանակայինի քրեստոմատիա մաս II . . . . . | — | 75 |
| 16 | ՅԵՖՈՐՇԻՆ. Սանիտարական ինքնօգ. ու փոխօգ. պատերազմում | — | 25 |
| 17 | Б. ЛВОВ. — Пехота главный род войск . . . . . . . . 94 ст. | — | 50 |
| 18 | Ս. ԳՈՒՐՈՎ. Հրաձգային ջոկը մարտում . . . . . | — | 35 |
| 19 | ԿՈՒՇՆԵՎ. Կարմիր գվարդիա . | — | 30 |
| 20 | Ն. ՍԱՊՈԺՆԻԿՈՎ. — Զորքերի համագործակցություն . . . | — | 35 |
| 21 | Պ. ՍՈԿՈԼՈՎ-ՍՈԿՈԼՈՎՍԿԻ. Ջոկը պաշտպանության մեջ . . | — | 30 |